679

1. Առջևդ ահա ծնկի եկած՝
Աղերսում եմ, ո՛վ Տեր Աստված,
Արթնացրո՛ւ ինձ ու միտքս բա՛ց՝
Մեծությունը Քո հասկանամ:
Ավելացրո՛ւ հավատքս, Տե՛ր,
Որ իսկապես Քեզ հավատամ,
Կասկածները ինձ չխաբեն,
Որ տեսնեմ Քեզ՝ ինչպես որ կաս,
Որ շուրթերով չպաշտեմ Քեզ,
Ու հենց այնպես չասեմ. «Դու կաս»,
Որ Քեզ սիրեմ, Տերս, այնպես,
Ինչպես սիրում ես, Տեր Դու մեզ:

2. Ողորմի՛ր ինձ, ո՛վ Տեր Հզոր,
Պաշտամունքս Դու ես միայն,
Աղաչում եմ գիշեր ու զօր,
Որ ազատես կյանքից ունայն:
Որ մտքերս չպղտորվեն,
Չալեկոծվի սիրտս տկար,
Որ տրտմության, թմրության մեջ
Չլինեմ Քեզ անհնազանդ:
Թող փրկության հզոր խոսքդ
Հոգուս խորքում գցի արմատ
Ու ծառ դառնա, բեռնավորվի
Պտուղներով իր կենարար:

3. Մաքրի՛ր, սրբիր ու զարդարիր
Անարգանքի անոթն այս իմ
Աստվածային Քո ճոխությամբ,
Քեզ արժանի վայելչությամբ:
Ու երբ հանկարծ Դու հայտնվես՝
Քո գալստյան այն Մեծ Օրում,
Չվախենամ ու չամաչեմ,
Ուրախանամ որպես որդի:
Ամ՛խ, երանի գրկես Դու ինձ,
Սեղմես կրծքիդ անարժանիս,
Առնես գիրկդ, տանես հեռու՝
Ընդմիշտ Քեզ հետ հավերժություն: